ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղադիր, 4 փ, 4 շ., Հեռ.
(094) 248414 , gegharir.kotayq@mta.gov.am

N 55
22 մարտ 2018թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ. ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ.

<<Տեղական ինքնակառավարման մասին>>ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն, Ձեզ է ուղարկվում Գեղադիր համայնքի ղեկավարի 2018թվականի թիվ 18-Ա և 19-Ա որոշումները:

Առդիր 6 թերթ

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Մուրադյան
Հեռ.096161060

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, gegharir.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մարտի 2018թվականի N 18-Ա

ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ,ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ,ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ,ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի ,,բ,, և ,,դ,, կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2018թվականի մարտի 6-ի N60-Ա որոշման պահանջները՝որոշում եմ.

1.Հաստատել՝

1)Կոտայքի մարզի Գեղադիր համայնքի տարածքում 2018թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների,հեղեղումների,սելավների,քարաթափումների և սողանքների կանխարգելման ,հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն N 1 հավելվածի:

2)առաջարկություններ՝ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ՝համաձայն N 2 հավելվածի:

2.Մինչև 2018 թվականի մարտի 27-ը ներառյալ Կոտայքի մարզային փրկարարական վարչություն ներկայացնել սույն որոշմամբ հաստատված հավելվածները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

2018 թ. մարտի 19
գ.Գեղադիր

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2018թ.ՄԱՐՏԻ 19-Ի N18-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ
ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ

Հ/Հ	Միջոցառումների անվանումը	Կատարող	Կատարման ժամկետը
1.	2.	3.	4.
	1.Կանխարգելիչ միջոցառումներ		
1.	Ուսումնասիրել և գնահատել հակահեղեղային կառույցների և Սելավատարների,քարաթափման տեղամասերի վիճակը և արդյունքները ներկայացնել Կոտայքի փրկարարական վարչություն:	Համայնքի ղեկավար	Մինչև 25.03.2018թ.
2.	Նախապատրաստել համապատասխան տեխնիկա և շինարարական նյութեր՝հակահեղեղային կառույցների և սելավատար-ներին և քարաթափմանտեղամասերի անհրաժեշտ հատվածները մաքրելու, վտանգավոր տեղամասերում ափապաշտպան կառույցները ամրացնելու համար:	Համայնքի ղեկավար	
3.	Մաքրել համայնքի տարածքով անցնող ջրատար խողովակները, հակահեղեղային կառույցները և սելավատարները: Վտանգավոր տեղամասերում ամրացնել ափապաշտպան կառույցները:	Համայնքի ղեկավար	Մինչև 25.03.2018թ
4.	Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանքների՝ ջրածածկման, հեղեղավտանգ, սելավավտանգ և սողանքավտանգ գոտիներում դաշտային աշխատանքները կարգավորելու համար:	աշխատակազմի քարտուղար	Մշտական
5.	Նախապատրաստել համապատասխան քանակի տրանսպորտային միջոցներ,ինչպես նաև վառելիքաքսայուղային նյութերի պաշար՝հարկ եղած դեպքում աղետի շրջանից բնակչության տարահանման և վերականգնողական աշխատանքներ կատարելու համար	Համայնքի ղեկավար	Մինչև մարտի 25-ը 2018թ.
6.	Պատրաստ վիճակի բերել համայնքային կազմավորումները և արագ արձագանքման փրկարար խմբերը, դրանք հագեցնել համապատասխան անձնակազմով, տեխնիկայով և սարքավորումներով:	Համայնքների ղեկավար	Մինչև 25.03.2018թ
	2. Հիմնական միջոցառումներ		
7.	Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝իրենց սպառնացող վտանգների, նկոտղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին:	Համայնքի ղեկավար	Մշտական
8.	Հնարավոր վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն՝ արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար:	Համայնքի ղեկավար	Անհրաժեշտության դեպքում

9.	[illegible] վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը:	Համայնքի ղեկավար	Անհրաժեշտության դեպքում
10.	Տուժած շրջաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ:	Համայնքի ղեկավար	Ըստ անհրաժեշտության
11.	Ներգրավել աշխատունակ քաղաքացիներին (իրենց համաձայնությամբ) ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների պատճառած հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անձնական հնարավորությունների:	Համայնքի ղեկավար	Անհրաժեշտության դեպքում
12	Գիշերային ժամերին փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքները շարունակելու համար ապահովել համապատասխան լուսավորվածություն	Համայնքի ղեկավար	Անհրաժեշտության դեպքում

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2018Թ-Վ. ՄԱՐՏԻ 19-Ի N 18-Ա ՈՐՈՇՄԱՆ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Գեղադիր համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ միջոցառումների վերաբերյալ

1. Վտանգի (աղետի) անվանումը(ները)	սելավ,սողանքներ
2. Վտանգավոր տեղամասի գտնվելու վայրը(երը)	Գեղադիր 3-րդ և 5-րդ փողոցներ
3. Առաջացման հնարավոր պատճառները	Ձնհալ, հորդառատ անձրևներ,ուժեղ քամիներ
4.Վտանգավոր տեղամասերի նկարագրությունը: Վտանգավոր գոտում գտնվող շենքերի, շինությունների և բնակչության թիվը	Վտանգավոր տեղամասերը բնակեցված են: Վտանգավոր շենքերի քանակը-25, բնակչության թիվը՝ 98:
5. Կանխարգելիչ միջոցառումների առաջարկությունները իրականացնելու համար	Համաձայն միջոցառումների պլանի
6. Համայնքների բյուջեներում կամ այլ ծրագրերով 2018թ-ին պլանավորված, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների համար ծախսերի չափը ըստ միջոցառումների տեսակների:	50.000/հիսուն հազար դրամ/

Գեղադիր համայնքի ղեկավար
համայնքի անվանումը

Հ.Գ. Սարգսյան
ստորագրություն (Ա.Ա.Հ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, gegharir.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մարտի 2018թվականի N 19-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, 2-րդ և 5-րդ մասերով ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի N731-Ն և 912-Նորոշումների, Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքի 1-ին փողոցի 23 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.04236 քառ մետր մակերեսով հողակտորում ինքնակամ կառուցված շինությունների՝բենզալցակայանի 123,3քմ.և պարիսպների 8,25քմ արտաքին մակերեսներով, պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը,վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, նկատի ունենալով,որ ինքնակամ կառույցը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա,ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով,չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ որոշում եմ.

1.Գեղադիր համայնքի 1-ին փողոցի 23-րդ հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,04236 քառ մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված շինությունները՝ բենզալցակայանը 123.3քմ. պարիսպները 8.25քմ՝ արտաքին մակերեսներով, համարել օրինական և ճանաչել համայնքային սեփականության իրավունքը:

2.Հաստատել օրինական ճանաչված շինությունների և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը (կցվում են):

3.Սույն որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից 5-օրյա ժամկետում տրամադրել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանում՝Գեղադիր համայնքի 1-ին փողոցի 23 հասցեում գտնվող գույքի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցներն իրականացրած Համլետ Նիկոլի Պետրոսյանին՝ օրինականացված կառույցները և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք)տրամադրելու մասին:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

20 18 թ. մարտի 21
գ.Գեղադիր